

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

1 մարտի 2018 թվականի N 285-Ն

**ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏՈՒՄ ՉԵՏԵՂՎՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄԻՑ ԲԱՑԻ ԱՅԼ ՏԵՍԱԿԻ
ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՐԻՉՆԵՐՈՒՄ ՉԵՏԵՂՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել նույնականացման քարտում գետեղվող էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերի թողարկումից բացի այլ տեսակի նյութական կրիչներում գետեղված էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերի թողարկման և տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-ԻՆ

Հավելված
ՀՀ կառավարության
2018 թվականի մարտի 1-ի
N 285-Ն որոշման

ԿԱՐԳ

**ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏՈՒՄ ՉԵՏԵՂՎՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄԻՑ ԲԱՑԻ ԱՅԼ ՏԵՍԱԿԻ
ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՐԻՉՆԵՐՈՒՄ ՉԵՏԵՂՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ**

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, փախստականի կարգավիճակ ունեցողների, քաղաքացիություն չունեցող անձանց և օտարերկրյա ֆիզիկական անձանց տրամադրվող էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերի թողարկման և տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիր ձեռք բերելու համար հայտատուն դիմում է Հայաստանի Հանրապետության հավաստագրման կենտրոն՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ հավաստագրման կենտրոն), որն իր կողմից հայտատուին ներկայացնում է անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, հավաստագրի տրամադրման նախապայմանները, ձևը, ժամկետները և վայրը:

3. Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի տրամադրման նախապայման է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կազմության քարտի, Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից տրված նույնականացման քարտի, հանրային ծառայության համարանիշի կամ վերջինս չստանալու վերաբերյալ տեղեկանքի, ինչպես նաև թվային ստորագրության տարեկան սպասարկման վճարի կատարման մասին անդորրագրի ներկայացումը:

4. Անձը հաստատող փաստաթղթերը և սպասարկման վճարի կատարման մասին անդորրագիրը ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հավաստագրման կենտրոնը տվյալ հայտատուին հեռախոսային կապի կամ էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացնում է հավաստագրման կենտրոն ներկայանալու անհրաժեշտության մասին: Հավաստագրման կենտրոնը նաև տեղեկացնում է հայտատուի կողմից անձամբ ներկայանալու օրվա, ժամի և վայրի, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերի բնօրինակների ներկայացման մասին:

5. «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի հիման վրա հայտատուն՝ անձը հաստատող բնօրինակ փաստաթղթերի հետ նույնականացվելուց հետո, հավաստագրման կենտրոնի հետ ստորագրում է համապատասխան էլեկտրոնային կրիչով հայտատուին հանձնված թվային ստորագրության կլիենտային ծրագրի տարբերակի, օգտվողի ձեռնարկի և կրիչում գետեղված էլեկտրոնային թվային հավաստագրի ընդունման-հանձնման ակտ: Հայտատուին տրամադրվում է նաև օգտվողի անունը (գաղտնաբառը) և կիրառման վերաբերյալ տեղեկատվական ձևը (թերթիկը):

6. Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը տրամադրելիս և դրանից հետո հավաստագրման կենտրոնը գործում է իր լիազորությունների շրջանակում՝ պահպանելով «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները:

7. Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը թողարկվում է 3 տարի ժամկետով: Հավաստագրի վերաթողարկումը կատարվում է ըստ հայտատուի դիմում-հայտի:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-ԻՆ